

« Միսեմի, Տ. Տ. Մակարայ Սրբազան կա-
 « րողիկոսի ամենայն Հայոց, և ի պա-
 « տրիարքոսեան Սրբոյն Երաստպետայն,
 « հանգուցեալ Տ. Երաստպէ Արքեպիսկոպոսի,
 « և ի պատրիարքարան կ. Պոլսոյ Տ. Յա-
 « րութիւն Սրբազան Արքեպիսկոպոսի,
 « վերստին ընդօրինակեցաւ թշկարան կո-
 « չեցեալ մատենան ձեռնարկ Աշտուի որ և
 « որպի Մարգար Գահանայի Բաղիշեցոյ.
 « ի կ. Պոլիս ընդ հովանեան Սուրբ Յա-
 « րութեան Եկեղեցոյ Բերայի:

« Վասն որոյ աղաչեմ, որք հանդիպիր
 « այսմ մատենակի թէ՛ ընդերցմամբ, թէ՛
 « գործածութեամբ, և երբ վասն ընդօրինա-
 « կելոյ, ի խնկաւետ աղօթս ձեր յիշելոյ
 « զպիտակ Աշտուի, զգրող թշկարանիս և
 « զվերոյիշեալ Մարգար Գահանայն հայրն
 « իմ, (որ ի գրեւն իմում զսա՛ ինձ օժան-
 « դակեր), և զքարեպաշտ Տիրուհի Մայրն
 « իմ, զՄարիամ Տիկին, և զհարազատ եղ-
 « րայրս՝ զպարոն Նշան, և զպարոն Արսեն,
 « և զԳրորքս՝ զԱղասա, զԱնգիւն, և զԵրաստպ,
 « և զհանգուցեալ հախնիսն մեր, զհասն իմ
 « Յարութիւն, զՀայր Մարգար Գահանայի,
 « և զերորին Հայր Մուրատ, և զՀայր Մու-
 « րատին զՂուսրո, աշխնքն Ղուսրի, որոյ
 « անուամբ մակամուսնեալ մեր սերունդ կոչի
 « Ղուսեան:

« Աղաչեմ և զայս, զի երբ հարկ յիցի
 « ումեք ընդօրինակել զթշկարանս, օրինա-
 « կեացէ ընդ նմին և զայս յիշատակարանս
 « անուանց զեղծման, որպէս և մեք ընդօրին-
 « ակեցաք զյիշատակարանն ինացիր թըշ-
 « կարանի. Նանա վերոյցրեալ անուանք ի
 « խնկաւետ աղօթս ձեր յիշէք, որ և դուք
 « յիշողք յիշեալ յիշէք ի պարտքին կնեաց
 « Աստուծոյն Բարձրելոյ, որ և օրհնեալ ի
 « պարգեւս խոր, որոնք և վայել և փառք,
 « պատիւ, և երկրպագութիւն ամենասուրբ
 « Երրորդաբնան Հօր և որդոյն և հոգոյն
 « պրոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
 « տենից ամեն»:

*

Ղուսեան Աշտուի չի յայտնեք թշկա-
 րանիս բնագիրը որո՛ւ է սեպհական և ո՛ւր

կը գտնուէր այն: Բայց յաւէտ երախտա-
 պարտ ենք իրեն, որ մոռացութենէ փրկած
 է թշկուհի Հայ կին մը, ԱՆՆԱՅ ԶԻՅԷ-
 ՄԵԱՆ, որ թշկարաններու շնորհիւ կրցած
 է բաւական ժամանակ թշկութեան ա-
 րուեստն ի գործ դնել, և նաեւ իր զիտ-
 ցածներն ալ գրի առնել տալ:

Մխիթարեան Մխարանութիւնը այս
 թշկարանն զնած է 1 մայիս 1888ին:

ՏՕՏԵ. ՎԱՆԴԱՄ Թ. ԹՈՐՈՍՏԵԱՆ

Վենետիկ — Ս. Ղազար

1 փետրուար 1923

(Շարունակելի)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱՆԻԿ

ՀԱՅՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՂԹԵՐՈՒՆ ՄԷԶ

(աղ. Աղբաւնդապու 1910)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 40)

40. Խոտի. իմաստը անյայտ է. Շոնշան
 խելապատակին վերտառեալ՝ ղեղեւեցին
 այսր անդր ոտնառութեամբ, զոգալով
 Թոպեալ իբրու ի Պիսիդոնի, որ այժմ
 ստորաբերեալ խափուցանէ, ի կօնէ կար-
 կատեալ այժմահեծուին այն և երկնաշուն,
 որպէս յեղջերդ խոտի խրեցեալ խափուց-
 մամբ (էջ 203): — Ընդհանուր իմաստը
 հետեւեալն է. իրենց խելը պիտի դառնայ
 և ապին անդին պիտի իյնան ծովի վրայ
 տարուբերուածի պէս կամ ինչպէս եղջիւ-
 րով հարուած ստացած:

41. Մապատրակիլ « զարուբիլ, սար-
 սափիլ »: Իբրու ի ծովի համատարածի
 ծփեալը, անդեկարար վաբանեալը ի ծե-
 րունեաց ծառացելոց ալեանց ծփմանց,
 ի ծերպ անկեանց ծպտեալը նաւացն,
 ծապատրակեալը ի հոսիցն բլրաձև կոհա-
 կացն, նաւապետին անկնարկեն (էջ 203).
 — Կրնայ նաեւ նշանակել « Թրշուիլ,
 խխում ըլլալ »:

42. Թարակածպտել. անստոյգ բառ. Տազնապ տոշորման Պոսիդեայ հասնալ Հեփիստու պաշարեաց... և ափորդիտա- կանն նուազեալ թառամի կարօտացեալ փարայի ի ծարակածպտել այս օգնակա- նութեան (էջ 48): — Միաքն այն է թէ տաքը կոխեց, կարօտ ենք անձրեւի կամ զով օյի: Բնագրին մէջ փարայի տպուած է գլխատառով, բայց վրիպակներու ցանկին մէջ ուղղուած է մանրատառով. յայտնի չէ, թէ ինչ բառի հետ կապելով՝ հրատա- րակիչն աւելի լաւ համարած է դնել ման- րատառ, որովհետեւ առաջին ակնարկով իրօք որ դիցարանական անուն մը կ'երեւայ և Ափորդիտէի արբանեակներէն մին:

43. Կանաւորի տես Սիրիֆնոս:

44. Կարբ « երկաթէ ցից »: Զնիւցարն Մատեռ... ձերթակալ արարեալ, ածէր յԱրմաւիր և անդ ուրեմն ի ծայրս աշտա- րակի պարսպին ցցէր, կարթ ընդ ճակատն վարեալ ի յորմ վարսել հրամայէր (էջ 59): Կարբ բառին այս իմաստը չունի ՆՀՖ. իմաստն ճշգրտան համար Բանտ. էջ 220՝ Զնայն ինքն զնիւցարն Մադէս կոչեցեալ անդ ուրեմն հանդէպ ի ծայրս աշտարակի պարսպին ցից երկարի ընդ ճակատն վա- րեալ ի յորմ վարսել հրամայէր:

45. Կծակարկած « մեծ դղում » որ իբրեւ զինի ռման կը գործածեն. Սակայն զտանձս տինեան կծակարկած տարազեալ պարտ էր տալ, Բւ ածին, զի յայտնանէ ճաշակեալ ի բացանցութեանց զաղարեալ, վաղ ուրեմն զձեզ ազատեալ (էջ 80): — Բառս կազմուած է կուծ + կարկած բառե- րէն, վերջինս թէեւ հին մատենագրութեան մէջ աւանդուած չէ, բայց կենդանի է նոր բարբառներուն մէջ « դղում » նշանակու- թեամբ. կծակարկած տարազեալ և կուծի ձեւով « տանձ » ըսելով Մագիստրոս կը ճանկնայ այն տեսակ մը լայնանիստ և սրածայր տանձերը՝ որոնք հիմա ալ Ղա- րաբաղի մէջ կը կոչուին կոյիքի (կոյս) « Զրի կուծ » բառէն կազմուած): Այս տանձերը հեղինակը փորութեան (բաց- անցութեան) իբր դիզ կ'առաջարկէ:

46. Կոյով « խմորի փօքրիկ գնդիկ »:

Առեալ խմոր՝ կողովս առնէր ձեռամբն և թացեալ ի գինի՝ արտաքս ձգէր և ասէր. Այդ է խարէութիւն քրիստոնէից (էջ 157): — Այսպէս ընողը թոնդրակեցի աղան- դաւորն է՝ որ քրիստոնէից Հաղորդութեան խորհուրդը կը ծաղրէ: Անշուշտ հոս կողով չի կրնար ունենալ ծանօթ նշանակութիւնը և վերի մեր դրած իմաստն ունենալու է:

47. Կոպորական. անստոյգ բառ. Զգիծ մակերեւակեալ տառի յոգնաբեղուն բար- դեալ յինքեան ներածութիւն ասորոգու- թեան ընկալայ, և կոպորական իմն սղեւո- րեալ կասկածանօք կարծեաց պշնեալ, ընդ աղօտ պշնելով (էջ 77): Այս անսիտ երկարաբանութեան իմաստն է. « Նամակդ տուի և վախճիւնով » քիչ մը կարգացի: Զնուագրական տարբերութիւններն են կո- պորակն և ուղեւորեալ. վերջինը ինծի շատ աւելի ընդունելի կ'երեւայ, քան անիմաստ սղեւորեալ ձեւը: Մագիստրոսի լեզուին շատ յարմար ոճ մըն է ըսել, թէ աչքերով ճամբորդեցի գրեթեզ վրայ: Այս բացա- տրութիւնը ընդունելէ յետոյ քիչ մը աւելի ճանաչելի կը դառնայ կոպորական կամ կոպորակն ձեւը: Փառառականներուն մէջ կայ կոպոր « ցելի կամ ձինի վրայ բա- ցուած նեղ ճամբայ »:

48. Հերմեսամաճ. անստոյգ բառ. Այլ բնականաց այս թեպէտեւ յօդոյ սիմեոն- կոնն անուանեալ, սակայն մտաց և մա- կացութեան ընդունակ. վասն որոյ երկիր զսա կոչել աստուած ոչ պատկառի, հեր- մեսամաճ, թեպէտեւ աշխարհ, բայց ի բազմաց աստուածս (էջ 205. այլ ձ. հեր մեսամած): — Արդեօք Հերմես աստուծոյ անունէն կազմուած բարդութիւն մ'է. հատուածին մթութիւնը չի թողուր պարզել բառին իմաստը:

49. Հնայրոսրիսն. ձեւով անստոյգ բառ. Պարսեաց զհակայն դէպ ուղղակի ի ճա- կատն ճահեցուցեալ հնայրոսրիսն պար- սին որոտիւնս թնդեալ յերկիր զարկուցեալ (էջ 11): Այլ ձ. ունի ղայրոսրիսն, որով յայտնի չէ թէ ո՞րն է ուղիղ. իմաստը հնդե կամ ձայրել բառերուն հետ պէտք է կա- պուի:

50. Ղորկայորիւն. անստոյգ բառ. Բայց զհայցեալդ առ ի մէջ զոսկեկոկոնդ եթովպացի յաղագս զորկայութեան զգեղեցիկս շնորհեցաք. և եղիցի քեզ ի մաքրութիւն և յառողջութիւն հազւայ և մարմնոյ (էջ 218). այլ ձ. զորկայորիւն, զորկայորեան. ստոյգ ձեւը յայտնի չէ:

51. Ճիւմիւր « ճիւտիւր, տրորուիլ, թռու միլ »: Բայց սոքա ճիւմաւը և ճեկճեկեալք ճիւթէն ճողորտեաց (էջ 218). — Հետեւ տեղէ նուէր զրկուած ձկներուն համար կ'ըսէ, որոնք ճամբան թրմոշկեր, ճիւղեր աւ տրորուեր էին:

52. Մանիա « տաքութենէ յառաջացած զառանցանք, սեւ մաղձ » (ըստ հին բժշկութեան). Կիզեալ առորորական մաղձ և ափորդիտական գործէ գնա, այնուհետեւ մանիան սեւամաղձեայ դանդաղիտ և դոխաշարժ դեղիւ կամ եթէ թափել աւրին (էջ 135). ասկէ կու գայ մանիական « զառանցական, սեւամաղձային », որու վկայութիւնը տնս մեղանպոդական բառին տակ, = Փոխառեալ է յն. μανία « զառանցանք, խենթութիւն, սեւ մաղձ » բառէն:

53. Մեգարեայ. անստոյգ բառ. Ի նոյն միակ պարտեալ և յեօթնիցն երկրորդացն դասուէ շաղկապեալ և յիւրն սրեցեալ միակ մեգարեալ և անդուստ յերկեակն երրորդին թաւացեալն և յօղն յանգեալն (էջ 208). — Թուերու անիմանալի յարաբերութեան մը վրայ կը խօսի, որով բառին իմաստը շատ մոթ կը մնայ կայ յն. μέγαρα « սրահ, ժողովարան, տաճարին մէջ պատգամախօսին տեղը », որմէ կրնար Մարգարտու բայ մը յօրինած ըլլալ:

54. Մեղանպոդական « տեսակ մը հիւանդութիւն ». Մթերեալ յինքեան զհամաքամուածն և զտողս և զափողիտական և զատիրբազունականն և զմանիական մեղանպոդականն կիզեալս (էջ 6). Ամբողջ հատուածը տենդային հիւանդութեանց մասին է. ասոնց մէջ մանիական բառը յայտնի է (տնս վերը մանիա). նոյնը կրնանք ըսել նաեւ մեղանպոդական բառին համար, որոնք թէեւ ճիշդ համապատասխանը չենք գտներ Bailly-ի բառարանին

մէջ, բայց կայ Μελάμπος, Μελάμποςος, որ հնութեան հոշակաւոր բօրիչ մ'էր. ասոր նուիրուած է Μελαμπόδεια Հեպտադոսի մէկ բանաստեղծութիւնը, Μελαμπόδεια կը կոչուին իրեն ժառանգորդները, μελαμπόδιον անունը կը կրէ սեւ եղբորու որ' որ իբր թէ առաջին անգամ Մեւամպուս բօրիչն է զորոածեր բժշկութեան մէջ: Զարմանալի չէ, եթէ տենդի մէկ տեսակն ալ այս հոշակաւոր բժշկին առնունով կոչուած ըլլայ: Ըստ իս ատիրբազունական բառն ալ սրբազնիւ է ատրաքանական. իսկ սոյգ բառին վրայ տնս վարը առանձին:

55. Մոյ « ծուխ, ծուխին բարձրանալը »: Արտաշէսն պարթեւ բաղձայր մյոյ մրկեալ ծիոյ շամնդաղեալ մակաւսար շինից և քաղաքաց. Ո' տայր ինձ, ասէր, զծուխ և զառուտոն նաւասարդի (էջ 87). — Կ'ուզէ ըսել թէ Արտաշէսը կը փափագէր տեսնել յորդ ծուխը' որ բարձրանալով' մշուշի պէս հաւասար փռուած կը տարածուէր գիւղերուն ու քաղաքներուն վրայ: Մոյ բառը այլուր աւանդուած չէ հին մատենագրութեան մէջ, բայց կենդանի է Ղազարի և Ղարաբաղի զաւառականներուն մէջ՝ « ծուխ » նշանակութեամբ. ասկէ կազմուած են մոյ անիւ (Լոռի) « քիչ ու միշ վառել », մյոյ (Ղազար) « ծխալ », միլի միլի (Պօլիս) « կամաց կամաց (այրիւ) », մյոյ (Ղարաբաղ) « ծուխը հանդարտ բարձրանալ », մյոյ (Մանիս) « առկայծիւ, պլպլալ », հին մատենագրութեան մէջ ալ մյոյտ « առկայծեալ, պլպլացող » Շիր. էջ 74. Եթէ տեսանիցեն զնոսա (զաստեղս) պայծառս և այլանմանս և միմոտս:

56. Մոյի « սիրտը կոտրիլ, ընկճուիլ? »: Այսն արարեալ, յայրս և ի փապարս արտալածեալ դիաշու, խրուացեալն այն հերօք և մուշեալն արտիւք, մաշկեղինաւ պարածածկեալ մարմնով (էջ 55): Ձեռագիր մը ունի մաշեալ, բայց հրատարակիչը կը դնէ մուշեալ, որ շատ կասկածելի է: Մէնէվիշեան, Գամազտ. էջ 82 մուշեալ արտիւք կը հասկնայ « հան-

դարտասիրտ, հեղաբարոյ » և կը կասկածի թէ անմոռոյական « անդանդադ » և զու. մշիկ մշիկ բառերուն հետ կապ ունենայ, — Այս հատուածին մէջ կէտադրութիւնը առհասարակ շատ պակասաւոր է, երեք տեղ ստորակէտ աւելցուցած են: Սխալ է նոյնպէս տող 23 մատնան բառին քով դրուած միջակէտը՝ որ երկու բառ անդին պիտի երթայ. ասով խօսքը իմաստ կը ստանայ. « Անցից յայտ մայրի գերկարութիւն բանից միով ծանուցեալ մասամբ և ոչ զերկարագոյնան յարդարեցից մաստան իրբու անծանօթի. տիրաբար տեղեակդ ես հին և նոր կտակարանաց »: — Չեմ ուզեր երկարել խօսքս, կ'ըսէ, իրբու անծանօթ մարդու, որովհետեւ հին ու նոր կտակարաններուն քաջ տեղեակ ես:

57. Յատուանց. դորոյովին անստոյգ բառ. Գանգի և այս ինքեանց սեպհական և հարազատապէս ի թրակիայ երեւեալ գիւտ, մանաւանդ ի յատտանցն ներքինեաց մարքագոյն և վճիտ քմաբարդութիւն և բացազանչութիւն պատկանեալ և յարմարեալ ձայնի (էջ 223): — Յայտնի չէ մինչեւ անգամ բառին ձեւը. յ կրկնուած նախդէր է թէ արմատական. ուղղական հոլովը ինչպէս պէտք է դնել:

58. Յոքորական. Երրորդն դարձեալ սակաւ քան զայլսն և ստեղծնոյր սպիտակափառ և ի սոցունց այլը յոքորականք հեղեալը (էջ 79): Պէտք է ուղղել յոգնորական « շատ »: հմտ. էջ 88 անուածուկ (հիւստած. չուին ՆՃԲ) յոգնորական զրահիւք. էջ 121 բիրաբեղուն և յոգնորական մակտացականութեամբ: ՆՃԲ և ԱԲ չուին յոգնորական ձեւը, բայց զիտն յոգնորական « շատ կերպ, բազմատեսակ » . պարածածկեալ յոգնորական գունովք. էջ 223:

59. Նայան. անստոյգ բառ. տնս Աճ. նակին:

60. Նատեան. անստոյգ բառ. վկայու. թիւնը տնս սփողել:

61. Նար(ին) « կրակ » ? տնս աննակին բառին տակ. այլ ճ. նակին:

62. Նաբո « վիշա », տնս թիւ 8:

63. Ներձոն. անստոյգ բառ. տնս Թ. 8:

64. Նիսեան « մարտ ամիսը ». Եւ մինչ ցնիսեանն, յորում պարառարար անցեալ բեզեկին մտան է ի խոյն (էջ 135): Ըսել կ'ուզէ՝ մինչեւ մարտ ամիսը, երբ արեւ-զակը շրջուելով կը մտնէ խոյի կենդանակերպը: Բառս գործածուած է նաեւ էջ 134, որուն վկայութիւնը տնս աննակին բառին տակ. երբայական nisān բառէն փոխառեալ է:

65. Նիտան. անստոյգ և թերեւս անգոյ բառ. տնս Թիւ 8:

66. Նպաստոյարին « պատրիկութեան աստիճանը ». Մինչ տակաւին ի տարերս էր անթիպատութեանն նպաստութեանն (էջ 23): Նոյն անձին մասին խօսելով Մագ. էջ 82 կը գրէ. ի խոնարհագոյն աշտիճանէ անթիպատ պատրիկութեամբ, որմէ կ'երեւայ որ նպաստոյարին բառին հոմանիշն է « պատրիկութիւն », Այսպէս կ'ընդունի նաեւ Կոստանեան, էջ 330:

67. Ոսմիդայ « տեսակ մը պողիպող ». ի թալանտայ (= յն. θάλαττα ծով) ար. տակիտեալ ստորիշացն ի խորս և յարեւ. դեանց ոսմիդայն (այլ ճ. Նումիդայն ընկաւեալ, զոր շիթք ամպոց գնա գործին (էջ 202): Կը խօսի լուգորդներուն կամ սուզակներուն վրայ՝ որոնք ծովին խորերը իջնելով, անոր փորոտիքէն կ'որսան ուսմիդան՝ որ ամպերուն շիթերէն կը յառաջանայ: Պէտք է ուղղել ոսմիդայ, որ է յն. ὀσμήνη, ὀσμήλιον, ὀσμήλιος « տեսակ մը ծովային պողիպող » որ զօրաւոր հոտ մը կը բուրէ »:

68. Ովամայ կամ ովանայ « կարմիր ծովէն ելլող մեծ ձուկ մը ». Կէտք վնհ զուով քան զգիագրու... և քան զգիակոնոտայն և կամ զովամայն, որ ի կարմիր ծովէ արտաքս ելեալ (էջ 213). Յիշատակեալ եմք զգիագրոս և զովամայն և զըռակոնոտայն և զվէտն Յոջիանու, բնդ նոսին և զլեիաթանայն (էջ 215): Գովի բառերը մեծ ձուկերու անուններ ըլլալով՝ այսպէս է նաեւ ովամայ կամ ովանայ: Առձ. բառ. ունի ովան « ծովային զագան մը », որ կ'երեւայ թէ այս բառն է:

(Շարունակելի)

Հ. ԱՅՈՒՆԵԱՆ